

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՈՒՄ
(1984 թ.)

Բ ու լ ղ ա ռ ի ա

Սոֆիայի «Գիտություն և արվեստ» հրատարակչությունը «Օտար ճանապարհորդները Բալկանների մասին» մատենաշարով լույս է ընծայել «Հայ ճանապարհորդները Բալկանների մասին (XVII—XIX դդ.)» հատորը, որը բուլղարերեն է թարգմանել Հակոբ Օրմանջյանը:

Հատորում ղեկավարված են Սիմեոն Լեհացու ուղեգրությունից, Հովհաննես Թովմաճյանի պատմությունից, Ղուկաս Ինճիճյանի և Ստեփաննոս Գյուլբեր Ազոնցի աշխարհագրություններից, Մինաս Բժշկյանի աշխատություններից քաղված նյութեր:

Գիրքն ունի քարտեզներ, աշխարհագրական անունների և անձնանունների ցանկեր: Ներածականում Հակոբ Օրմանջյանը խոսում է Բալկանյան երկրների XVII—XIX դդ. պատմության մասին և հայ ուղեգիրների աշխատությունները ներկայացնում է որպես այդ երկրների վերաբերյալ արևելքավոր աղբյուրներ:

«Հայրենիքի ձայն»,
20 մարտի 1985

Ռ ու մ ի ճ ի ա

«Արարատ» թերթում տպագրված «Հայ գրականությունը ուսմաներեն» հոդվածում բերված էն հետաքրքիր տեղեկություններ Ռումինիայում հրատարակված մի շարք հայերեն գրքերի թարգմանության մասին: Այսպես, օրինակ, դեռևս 1922-ին Բուխարեստի Ազգային մշակույթ հրատարակչությունը «Համաշխարհային գրականություն» մատենաշարով հրատարակել է «Հայկական քնարերգության» խորագրով մի հատոր Գրիգոր Զալխուշյանի առաջաբանով և Գրիգոր Ավագյանի թարգմանություններով ու ծանոթագրություններով, ուր տեղ են գտել Շնորհալու, Նալբաշի, Երզնկացու, Թևրդանցու, Քուչակի, Սայաթ-Նովայի և այլոց ստեղծագործությունները: 1934-ին նման մի գիրք է լույս տեսնում՝

Լազմված Վարուժան Մեղտունյանի կողմից, որտեղ թարգմանաբար հրատարակվել են Պեշիկ-Խաշլյանի, Դուրյանի, Նալբաշյանի, Թումանյանի, Տեմիրճիպաշյանի, Զոհրապի, Սիպիլի, Սիամանթոյի և այլոց բանաստեղծությունները:

«Ռուսական գիրք» հրատարակչությունը 1957-ին լույս է ընծայում Ավետիք Իսահակյանի մի շարք գործերը՝ «Ընտիր քերթվածներ» վերնագրով, որում ին բանաստեղծների թարգմանությամբ: 1958-ին Սիրակ Գագանյանի թարգմանությամբ հրատարակվում է Արամ Ղանալանյանի կողմից կազմված «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն:

Ռումին բանաստեղծների Վիթթոր Թուրբուրեն և Դան Դեշլիուն թարգմանել և «Գեղեցկագույն բանաստեղծություններ» մատենաշարով լույս են ընծայել Քուչակի հայրենիքը (1963-ին) և Սայաթ-Նովայի քերթվածները՝ «Աշուղ Իշխանը» վերնագրով (1975-ին):

«Սասունցի Դավթի» ռումիներեն թարգմանությունը լույս է տեսել Նիբոլայե Յեյքի թարգմանությամբ՝ 1965-ին և ապա 1971 թ.՝ Վիթթոր Քերնպախի ներածականով:

1973-ին «Օրֆիու» մատենաշարով հրատարակվում է Հովհ. Թումանյանի բանաստեղծությունների հատընտիրը, իսկ այնուհետև Րաֆֆու «Դավիթ Բեկը» Մ. Փոլատյանի թարգմանությամբ:

1978-ին «Ունիվերս» հրատարակչությունը լույս է ընծայել Ռաֆայել Արամյանի «Մեռած քաղաքի պարիսպների տակ» գիրքը Սարգիս Սելյանի թարգմանությամբ: Այնուհետև հրատարակվել է «Հայկական առածներ և խոհեր» ժողովածուն, ղարձյալ Ս. Սելյանի թարգմանությամբ: Հրատարակվել է նաև Լ. Ս. Գոռնովոյի «Հայկական մանրանկարչությունը» և «Հայ դասական ու ժամանակակից բանաստեղծության հավաքածուն», որ թարգմանել են ռումին հայտնի բանաստեղծները: Ռումիներեն հրատարակվել է նաև Ավետիք Իսահակյանի «Արու-Հալա Մահա-րին»:

«Արարատ», 16 մարտի 1984

Ռումինիայի զանազան գրադարաններում և արխիվներում պահվում են XIV—XV դդ. պատկանող բազմաթիվ հայերեն ձեռագրեր, որոնք այդտեղ են հայտնվել այլևայլ վայրերից Ռումինիա գաղթած հայերի միջոցով:

Ինչպես հայտնում է Սոֆիայի «Երևան» թերթը, այդ ձեռագրերից հատուկ հետաքրքրություն են ներկայացնում XIV դարի առաջին կեսին գրված հինգ ձեռագրեր՝ Տարոնի ավետարանը, Ֆամագուստայի Հավաքածուն և Կիլիկիայի ու Սուրհատի ավետարանները:

Ձեռագրերը դարձարված են հայ ժողովրդի ճակատագրի դրամատիկական պահերը պատկերող մանրանկարներով:

«Երևան», 25 օգոստոսի 1984

Ապրիլի 2-ին և 9-ին Ռումինիայի Կուլտ քաղաքի ռադիոկայանը իր մշակութային ծրագրում հարցազրույց է կազմակերպել հայերի մասին, որն ամբողջ կերպով ներկայացված է «Արարատ» թերթում: Հարցազրույցի մասնակից Քերեսի Ջուլիան պատմել է հայերի անցյալի ու ներկայի մասին. «Թրանսիլվանիա հաստատված հայերը 1233-ին թողուցած են իրենց սիրելի Անի քաղաքը և երկար ճամբորդություն են անցրել, 1672-ին հաստատված են իրենց երկրորդ հայրենիքին մեջ»:

Քերեսի Ջուլիան մատնանշել է, որ դարասկզբին հայագիտական հարցերով զբաղվել են Եղիա Հովհաննիսյանը և Քորսուլ Տոմոնթոշը: Անցյալ տարի լույս է տեսել Թարիանեաշ Մարթուի «Ճորճովի աղագրական պատմությունը» խորագրով գիրքը: Մամուլում այժմ լույս են տեսնում ռոգվածներ, որոնց նպատակն է հայկական մշակույթին ու արժեքները ծանոթացնել հայ գաղութին:

Հաղորդման ժամանակ հնչել է Արամ Խաչատրյանի և Շարլ Աղնավուրի երաժշտությունը, կարգացվել են հատվածներ Սասունցի Դավթից: Իրենց տպավորություններն են պատմել Հայաստան չայցելած բաղաբաշխները:

«Արարատ», 2 դեկտեմբերի 1984

Ի Ի Բ Ե Կ Ե Կ

Դեկտեմբերի 23-ին տեղի է ունեցել լիբանանահայ գրական շրջանակի նոր ակումբի բացումը կրթական նախարար ղոկտ. Սելիմ Հըսի հովանավորությամբ և քաղաքական, հասարակական, մշակութային բազմաթիվ գործիչների, գրողների, արվեստագետների ներկայությամբ: Բացման խոսքով հանդես է եկել Մարտիրոս Գուշագճյանը (հայերեն) և վարչության անդամ, ճարտարագետ Ֆարատ Երեցյանը (արաբերեն),

որոնք նշել են, որ լիբանանահայ գրական շրջանակը պիտի շարունակի մերձեցնել լիբանանահայության գրական-մշակութային կապերը արաբական հասարակության հետ՝ հայ գրականությունն ու մշակույթը ծանոթացնելով արաբ ընթերցողներին և արաբական գրականությունը՝ հայ հասարակությանը: Գրական շրջանակի առաջնահերթ խնդիրն է մերձեցնել կապերը Մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ: Գրական նոր ակումբի բացման անդրագրվել են լիբանանյան հեռուստացույցը և մամուլը:

«Ազգային մշակույթ», 30 դեկտեմբերի 1984

Թ ո Ր Բ ի Կ

Ինչպես տեղեկանում ենք «Զարթոնքից», «Ռեկտեր» լրագրական գործակալությանը պատկանող «Շենշող Հայաստանն մի քանի հետքեր միայն կմնան արևելյան Թուրքիո մեջ» խորագրով ռոգվածում նկարագրում է Արևմտյան Հայաստանի և հատկապես Վանի հայկական ավերակ հուշարձանների վիճակը: Հոգվածում ասված է, որ դարավոր Վանը քանդված է և բնակչության թիվը հասել է բնականորեն մի քանի հազարի: Ինչև նոր Վանը կառուցված է նույն տեղում և այսօր շուրջ 200 000 բնակչություն ունի, տեղացիք այնուամենայնիվ հայտնում են, թե հայեր չկան այդ բնակչության մեջ: Վանը և շրջակայքը բնակեցված է քրդերով: Թուրքիայի մեջ այսօր շուրջ 40 000 հայեր են ապրում: Վանի շրջանի բնակիչները հայտնում են, թե լեռների բարձրագույն գյուղերի մեջ հայեր կան: «Արտասահմանն բազմաթիվ հայեր կուգան Վան» ալիքները տեղի եկեղեցին, որ կարևոր վանքի մը մեկ մասը եղած է: Ուրիշ հաղարամյա հայկական եկեղեցի մը կանգուն կմնա Ծոփ Քիլիսե (30թ եկեղեցիներ) գյուղին մեջ, որ Վանեն 15 իրիմետր հարավ-արևելք կգտնվի: Ծոփ Քիլիսեն կրոնական և մշակութային կարևոր կենտրոն էր հայերուն համար: Այժմ բնակեցված է բուրդեր, որոնք եկեղեցին և շրջակա կառույցները հարգանքի վերածած են»:

«Զարթոնք», 23 փետրվարի 1984

Հոկտեմբերի 8—11-ը էրդրումում, տեղի համալսարանում կայացել է «գիտական» սիմպոզիում նվիրված հայ և թուրքական պատմական հարաբերություններին: Սիմպոզիումին ղեկուցումներով հանդես են եկել պրոֆեսորներ, դիվանագետներ, դինվորականներ և ուրիշներ: Ինչպես գրում է «Զարթոնք» թերթը, «ըստ էության հակահայ մոլուցքը և հակագիտական ու հակապատմական մոտեցումն է, որ տիրապետող եղած է բոլոր ելույթներում, առանց բացառու-

Քյան»։ Զեկուցողների հիմնական թեզը եղել է այն, թե «սուտ է, որ թուրքերու կողմն հայկական ջարդեր կազմակերպված են 70 տարի առաջ, բնդհակառակը՝ հայերը օտար պետությանց և հատկապես Ռուսիո կողմն գրգռվելով ապստամբաօ ըլլալով՝ բախումներու ընթացքին իրենցմն 300 հազար անձեր կորսնցուցած են իրենց կյանքը, միջնդեո այս կոիվներու հետեանքով երկու միլիոն թուրքեր ըսպաննված են եղեր։ Թուրքերը այնրու հանդեպ միշտ լավ վերաբերում ցուցաբերած և կատարյալ ազատություն տված են եղեր անոնց»։

«Ջաւրոնք», 14, 17 նոյեմբերի 1984

Ի ր ա ն

Վերաբացվել է Սպահանի համալսարանի հայագիտական ամբիոնը միայն ամբիոնի հին ուսանողների համար, որոնց թիվը 18-ն է։ Նոր ուսանողների ընդունումը հարցականի տակ է։

«Ջաւրոնք», 12 նոյեմբերի 1984

Ահուագում ապրում են 146 հայ ընտանիք, 640 հոգով, որոնք Իրան-իրաքյան պատերազմի պատճառով հեռացել են Խուզիստանի շրջանից։ Ահուագում կան Դարուն և Րաֆֆի անունով նախակրթական և միջնակարգ դպրոցներ։ Այդ փոքրիկ գաղթօջախում գործում է Կանանց եկեղեցասիրաց միությունը, Մարդամշակութային երիտասարդաց միությունը և Զարմահալի Հայ ուսումնասիրաց միության Ահուագի մասնաճյուղը։

«Ջաւրոնք», 24 փետրվարի 1984

Դ ա ն ի ա

Դանիալում լույս են տեսել դանիացի ժուռնալիստուհի Դանի Կժարսկաարտի երկու գրքերը՝ «Մենք ի՞նչ ըրինք» և «Կրկին» խորագրերով, որ վերաբերում են հայ ժողովրդին, նրա պատմությանը, մշակույթին և ավանդույթներին, ինչպես նաև Հայկական հարցին։ Երկու գրքերն էլ լայն ժողովրդականություն են ստացել Դանիալում, մամուլում տպագրվել են դրական գրախոսականներ։ Գրքի հեղինակը Կոպենհագենի ուղիորդ հարցազրույց է ունեցել, ապա կազմակերպվել է առաջին գրքի մասին ուղիորդողը։

«Երեւան», 11 փետրվարի 1984

Շ վ ե յ ց ա ր ի ա

1984 թ. հուլիսի 3-ին Ժնևում վախճանվել է նշանավոր հայագետ Ռուպեր Գոդելը, որի կենսագրությունը հակիրճ ներկայացված է «Արևում»։

«Արև», 6 օգոստոսի 1984

«Ժուռնալ դը Ժնև» օրաթերթի 1984 թ. ապրիլի 21-ի համարում լույս է տեսել Դանիել Վարուժանի «Կարմիր հող» բանաստեղծությունը Վահե Գոդելի թարգմանությամբ և թարգմանչի խոսքը Վարուժանի պոեզիայի մասին։

Վահե Գոդելը մեծ վաստակ ունի հայ դասական և արդի բանաստեղծների ստեղծագործությունների պրոպագանդման գործում։ Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Բելգիայի ֆրանսերեն տպագրվող մամուլում նա թարգմանաբար և հոգվածներով անդրադարձել է շուրջ 20 հայ բանաստեղծների։ Սակայն նրա նախասիրած բանաստեղծը Վարուժանն է։ Դեռևս 60-ական թթ. Փարիզի հայտնի «Սեդերա» հրատարակչությունը Վ. Գոդելի թարգմանությամբ լույս է բնծայել Վարուժանի «Հեթանոս երգեր» և «Հացին երգը» ժողովածուները։ Հայերենի և հայ գրականության ու մշակույթի հիանալի իմացությունը նրան օգնել են օտար ընթերցողներին հարազատորեն ներկայացնելու Վարուժանի պոեզիան։

«Արև», 13 նոյեմբերի 1984

Շ վ ե ղ ի ա

«Արարատ» թերթում կարդում ենք. «1887-ին Սիմոնյոնի միակ հայ բնակիչը (խոսքը նորայր Բյուրանդացու մասին է) կհրատարակեր հայագիտական հանդես։ Ներկայիս շվեյցալ գաղութը ունի հազար անգամ, երկու ժամ տևող ծայնասիրուրի հայտագիր և պարբերական մամուլ։ Ստոկհոլմում ապրում են 500 հայեր, 200-ը Ուիսալայում, մնացյալները՝ այլ քաղաքներում։ 1974-ին Ստոկհոլմում կազմակերպվել է «Հայ մշակութային միություն» ակումբը։ Նույնպիսի միություն կա նաև Ուիսալայում։ Ակումբն ունի գրադարան, կազմակերպվում են դասախոսություններ, գործում է թատերական խմբակ։

«Արարատ», 27 սեպտեմբերի 1984

Ի տ ա լ ի ա

Միլանում լույս է տեսել Կոմիտասի «Քրդական մեղեդիներ» նոտաների հատորը հայերեն, իտալերեն, ֆրանսերեն և անգլերեն բնագրերով, շքեղ հրատարակությամբ։ Գրքում ամփոփված են քրդական 13 երգեր, որ հավաքել է Կոմիտասը Փոքր Ասիայում կատարած իր ճամփորդության ժամանակ։ Երգերը առաջին անգամ հրատարակվել են 1903 թ. Մոսկվայում, կազարյան ճեմարանի կողմից։

«Ջաւրոնք», 16 օգոստոսի 1984

վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում կադմակերպած միամսյա դասընթացներին մասնակցել են 46 հայ երիտասարդներ Կանադայից, Հունդիսից, Ֆրանսիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Իտալիայից և Սիրիայից: Դասավանդվել է հայոց լեզու (գրարար և աշխարհարար), դրականություն, պատմություն, արվեստի պատմություն: Դասախոսություններ են կարդացվել հայկական ճարտարապետության, մանկանկարչության, պոեզիայի վերաբերյալ:

«ԱՐև», 4 հոկտեմբերի 1984

Ա ճ գ լ ի ա

Լույս է տեսել «ՍովետաՆայ բանաստեղծությունը» գիրքը Միշա Գյուտյանի թարգմանությամբ: Հատորը ընդգրկում է 18 հայ բանաստեղծների 62 բանաստեղծություններ, սկսած Հովհ. Թումանյանից, Ավ. Իսահակյանից ու Վ. Տերյանից մինչև Չարենց ու Սևակ: Գրքի վերջում տրված են հեղինակների կենսագրությունները: Այս հատորը Միշա Գյուտյանի հեղինակային և թարգմանական գործերից 18-րդն է: Գիրքը նա հրատարակել է Պարույր Սևակի ծրեքնդյան 60-ամյակի առթիվ:

«Զարբոն», 17 օգոստոսի 1984

Պ Ե Կ Ե Ն ի ա

«Արև» լրագիրը գրում է. «Ֆրանսիայի պատկերասրահի «Անթեն-2» կայանը երկու շաբաթ առաջ ցուցադրած էր Ազգի մր ողբերգությունը հայտագրին առաջին մասը, ուր Հայկական ցեղասպանությունը ներկայացված էր իր ամբողջ ողբերգությամբ: Բնականաբար Թուրքիա դառնորեն բողոքած էր ֆրանսիական կառավարության, ալդ ցուցադրությունը որակելով Թուրքիո շահերուն դեմ լեզվազարություն և ահաբեկչության հրահրում: Թուրքիա ազդարարած էր թե՛ էթն հայտագրի ցուցադրությունը շարունակվե՞լ «չափազանց գեշ հետևանքներու տեղի պիտի առաջ: «Ազգի մր ողբերգությունը» շարունակվեցավ ֆրանսական պատկերասրահին ցուցադրվիլ: «Թերեյուման» օրաթերթը նոյեմբերի 15-ի իր համարին մեջ անգուսպ գայրություն վրանսական կառավարությունը և ընդգիմադիր կուսակցությունը կներկայացնե որպես «երկրին 25 հազար հաշվովող հայերու քվեներուն անձնատուր եղած» և ֆրանսական կառավարության ընթացքը կնկատե թշնամական, ամբարտաժան և նախատինք Թուրքիո դեմ, ու կավելցեն. «Այսուհետև ֆրանսական կառավարության թշնամական կեցվածքին դեմ փոխազայություն կակնկալվի»:

...«Թերեյուման» կգրե, թե պատկերասրահի ալդ հայտագիրը օրացարձակորեն ահաբեկչության կհրահրե և Թուրքիո հանրապետության բայքայումը կբաջալենր: Այդ հայտագրին մեջ հայեր կհանդգնեն Թուրքիային հող պահանջելու»:

«ԱՐև», 27 դեկտեմբերի 1983

Ժողովուրդների միջազգային ատյանը 1984 թ. ապրիլի 13—16-ը դատական նիստ է գումարել Փարիզի Սորբոնի համալսարանում Հայկական ցեղասպանության վերաբերյալ, մեղադրելով Թուրքիային որպես XX դարի առաջին ցեղասպանության պատասխանատու:

Դատարանի կազմի մեջ են եղել միջազգային ճանաչում ունեցող ոչ հայ 13 անձներ, որոնց թրվում խաղաղության նորելյան մրցանակակիրներ իտալացի Շոն Մըք Պրայտը և արգենտինացի Ատոլֆո Փերեզ էսքիվելը, ինչպես նաև կենսաբանության գծով նորելյան մրցանակակիր ամերիկացի Ճորձ Ուոլտը:

Ծորյա նիստերից հետո ծանոթանալով ներկայացված բոլոր փաստաթղթերին, թեր ու դեմ բոլոր վկայություններին, ինչպես նաև նկատի առնելով իրավաբանների, օրենսգետների և պատմաբանների կարծիքները, ժողովուրդների Միջազգային ատյանը որոշել է, «թե հայ ժողովուրդին դեմ գործադրված ցեղասպանությունը անժամանցելի և միջազգային ոճիր մըն էր, որ պետք է ճանչցվի պաշտոնապես, ընդհուպ ՄԱԿ-ի և անոր անդամ բոլոր պետություններու կողմն, և ալդ ոճիրին հեղինակը նրիտ. Թուրքերու կառավարությունն է»: Վեց կետից բաղկացած բանաձևում Ատյանը հանձնարարում է նաև «ճանչնալ և հարգել հայ ժողովուրդին իրավունքները՝ միջազգային օրենքի տրամադրությանց համաձայն»:

«Զարբոն», 18 ապրիլի 1984

Փարիզում հրատարակվող «Աշխարհ» շաբաթաթերթի 1984 թ. ապրիլի 28-ի համարում գետեղված է «Ժողովուրդներու ատյանը» կդատապարտե Թուրքիան» խորագիրը կրող հաղորդագրություն, ուր կարդում ենք. «Ապրիլ 13-են 16 տեղի ունեցավ «Ժողովուրդներու ատյանին» առջև 1915-ի ցեղասպանության զատավարությունը: Միջազգային այս ատյանը պիտի քններ դեպքերը, հիշատակությունները, վկայությունները և փաստերը ու արձակել իր վճիռը: Առաջինը խոսքը առավ պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը (ԱՄՆ), որ փայլուն ամբաստանագիր-տեղեկագրություններով տպավորեց զատակազմը: Իրեն հաջորդեցին Հոֆման և Ք. Ուալթերի օտար աղբյուրներու վրա հիմնված երկու տեղեկագիրներով:

14 ապրիլ շաբաթ առավոտ տոբթ. իվ Թեր-նոնի մեկուկես ժամ տևող հաղորդումն ալ հատկանշական էր: Մեկնելով թրքական տեսակետներն, փաստերով, վկայություններով և տրամաբանական վերլուծումներով մի առ մի ջրեց բոլոր պնդումները, ապացուցելով ցեղասպանություն՝ կանխամտածված, կազմակերպված և զործադրված ըլլալը: Հսկեցան նաև վերապրողներու շորս վկայությունները:

Կեսօրվա ընդմիջումեն առաջ նախագահը հայտարարեց թուրք ծանոթ բեմադրիչ Երմազ Կյունեյի ներկայությունը սրահին մեջ, որ ան ալ զրավոր հայտարարություններով տեսակ մը իր վկայությունը բերալ զուգահեռի դնելով հայերու և քուրտներու և հույներու դեմ եղած ցեղասպանությունը...

16 ապրիլ երկուշաբթի ժամը 11-ին Մերակուտի Մետիսիս սրահը լեցված էր միջազգային մամուլի ներկայացուցիչներով և հոծ հայ հասարակությամբ:

Նախագահ փրոֆ. Ռիկո հակիրճ կերպով հիշեցուց ամբաստանությունները և իրենց առջև դրված հարցերը և կարդաց զատակազմի վճիռը, որ ամփոփված էր վեց կետերու շուրջ:

Բոլորն ալ կդատապարտեին Թուրքիան՝ ըսելով, որ ցեղասպանությունը զործված է, որ մարդկության դեմ ոճիր մըն է, անժամանցելի է, թուրք պետությունը չկրնար իշխանության ընդհատում պատրվակել, պետք է պատասխանատվությունը ստանձնեն և արարքին հետևանքները ընդունին:

«Աշխարհ», 28 ապրիլի 1984

Բելյուսթի «Ազգային մշակույթ» թերթից տեղեկանում ենք, որ ֆրանսիական լրատու գործակալությունը Փարիզից հաղորդել է, թե երկու արյուր ֆրանսիացիներ ստորագրել են մի կողմ, որ Եվրոպական Համայնքի ատյաններեն կպահանջեն ճանշնալ հայկական ցեղասպանությունը: Սույն կողմն նախաձեռնությունը առած է «Ֆրանքո-հայկական միասնականություն» կազմակերպությունը: Կողը ստորագրել են անվանի գրողներ, գիտնականներ, քաղաքական գործիչներ, դերասաններ, բեմադրիչներ: Այնուհետև կարդում ենք. «20-րդ դարու առաջին ցեղասպանությունեն 68 տարիներ ետք, հայերը միշտ կսպասեն, որ արդարությունը ի գործ դրվի իրենց ներկատմամբ», կշեռեն կողը, որ կհիշեցնեն նախագահ Զորանսուա Միթերանի այն պահանջը, թե «հայոց ցեղասպանության մասին պատմական ճշմարտությունը այլևս քուլարկված չմնա»:

«Ազգային մշակույթ», 24 հունիսի 1984

Սեպտեմբերի 20-ին 74 տարեկան հասակում վախճանվել է Փարիզի «Աշխարհ» թերթի հիմնադիր-խմբագիր, ֆրանսահայ գրողների ընկերակցության նախագահ՝ Ավետիս Ալիքսանյանը: 25 տարի նա եղել է «Աշխարհի» խմբագիրը:

«Աշխարհ», 29 սեպտեմբերի 1984

Բ Ե Կ Ե Լ Ի Կ

Սան-Պաուլուում լույս տեսնող «Ժողնալ տո իմիրանթեն» պարբերականը ապրիլ-մայիսի համարը նվիրել է հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, XX դարի առաջին ցեղասպանությանը, Հարավային Ամերիկայում ստեղծված պաշտպանության և այլն: Թերթը լույս է տեսնում պորտուգալերեն:

«Շարժում», 11 հուլիսի 1984

Ե Ե Կ Ե Լ Ի Կ

Բուենոս-Այրեսի «Շարժում» թերթը տպագրել է «Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները XIX դարու Բ կեսին» վերնագրով հոդվածը՝ նվիրված Երևանում, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում տեղի ունեցած գիտական նստաշրջանին, որը ղեկուցումներ են կարդացել պրոֆեսորներ Մ. Ներսիսյանը, Ա. Համբարյանը, Հ. Պողոսյանը և պատմ. դիտ. թեկն. է. Կոստանդյանը:

«Շարժում», 31 հոկտեմբերի 1984

Ա Մ Ն

Լույս է տեսել Ղևոնդ պատմիչի «Հայոց պատմությունը» անգլերեն, հ. Ջավեն Արդումանյանի թարգմանությամբ:

«Ջարբոն», 12 հունիսի 1984

Լույս է տեսել Անդրանիկ Չելեպյանի «Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը» դիրքը, բաղկացած 764 էջից, ունի հարյուրից ավելի նկարներ, մատենագիտություն (270 աղբյուրներ):

«Լաբեր», 28 հուլիսի 1984

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ